♦ **«Ձայն»**
**վերլուծական տեղեկատվական լրատու**
Նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

♦ **լուսաբանել**
իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

♦ **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**
բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:

♦ **Ծրագիրը իրականացնում է «Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն»**
ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:


# Ձայն




♦ ՀԱՄԱՐ 1 ♦ ՓԵՏՐՎԱՐԻ, 2004
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ


## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Արմենտելի հետ կապված խնդիրները

Արմենտելը դիմել է Լոնդոնի արբիտրաժային դատարան և մտադիր է պահանջել մինչև 300 մլն. ԱՄՆ դոլար, որպես բջջայինի և ինտերնետ կապի իր մենաշնորհից զրկվելու դիմաց վնասների փոխհատուցում: Նման գումար պահանջելու Արմենտելի հիմնական փաստարկը այն է, որ ժամանակին կառավարությունը թույլ չի տվել բարձրացնել րոպեավճարը և հիմա էլ զրկելով մենաշնորհից, կրկին մեծ վնասներ է պատճառում կազմակերպությանը:



Փաստորեն առաջիկա 10 տարիների մենաշնորհի իրավունքը Արմենտելը գնահատել է մոտ 250 մլն. դոլար, քանի որ րոպեավճարի չմտցնելու կորուստը անցյալ 5 տարիների համար չի կարող գերազանցել 50 մլն. դոլար գումարը: Իսկ եթե հաշվի առնենք, որ Արմենտելի ձեռք բերման և ներդրումների վրա կատարված ծախսերը տարբեր հաշվարկներով (կախված թե որ ծախսերը կարելի է ներդրում հաշվարկել) տատանվում են 250 մլն. ԱՄՆ դոլարի սահմանում, ապա դա նշանակում է, որ եթե ընկերության ղեկավարությունը որպես մենաշնորհի վերացման փոխհատուցում պահանջում է Արմենտելի արժեքի չափ գումար, ապա առանց մենաշնորհի Արմենտելի արժեքը պիտի կազմի զրո:

*Շար. հաջորդ էջում*

# Աղքատությունը և անհավասարությունը Հայաստանում

*Հայաստանում աղքատությունը պաշտոնապես կազմում է 50 տոկոս: Պաշտոնապես աղքատ են համարվում այն ընտանիքները, որոնց եկամուտը 1 շնչի հաշվով ցածր է մոտ 13 000 դրամից: Աղքատության այս սահմանումը շատերի կողմից շատ ցածր է համարվում: Որպես աղքատության ավելի լիարժեք ցուցանիշ կարելի է վերցնել 1 շնչի հաշվով ամսական 20 000 դրամը, որը մոտավորապես հավասար է գնողունակության գործակցով ճշգրտված օրական 4 ԱՄՆ դոլարին: Այս դեպքում Հայաստանում աղքատությունը կկազմի մոտ 80 տոկոս: Ի միջի այլոց, 20 000 դրամ ցուցանիշը համեմատելի է խորհրդային տարիներին հաշվարկված աղքատության գծի հետ, ըստ որի մինչև շուկայական հարաբերությունների անցումը Հայաստանում աղքատությունը կազմել է 20 տոկոս:*

## Ո՞րն է աղքատության հիմնական պատճառը. տնտեսության զարգացման մակարդակը, թե անհավասարությունը

Հայաստանում աղքատությունն աճել է երկու հիմնական պատճառով՝ ՀՆԱ-ն կրճատվել է, և եկամուտները տնային տնտեսությունների միջև սկսել են խիստ անհավասար բաշխվել: Այս երկու գործոնի ազդեցությունն էլ նշանակալի է: Հայաստանը համարվում է ոչ միայն աղքատ երկիր (1 շնչի հաշվով իրական եկամուտը ավելի քան 10 անգամ ցածր է զարգացած երկրների մակարդակից), այլ նաև եկամուտների բաշխումը Հայաստանում աշխարհում ամենաանհավասարներից մեկն է: Աղքատությունը կարելի է հաղթահարել երեք ճանապարհով, կամ մեծացնել ՀՆԱ-ն (դրա համար այս տեմպերով անհրաժեշտ կլինի մոտ 15-20 տարի), կամ մեղմացնել բևեռվածությունը կամ էլ այս երկուսը միասին: Որպեսզի Հայաստանում «13 000 դրամանոց» աղքատությունը վերանա, ՀՆԱ-ն պետք է ավելի քան 2 անգամ աճի: Իսկ եթե ցանկանանք աղքատությունը վերացնել առանց ՀՆԱ-ի զգալի աճի, ապա դա էլ է հնարավոր, միայն թե այս դեպքում եկամուտները պետք է բաշխվեն այնպես հարթ, ինչպես, օրինակ Լատվիայում: Այս ցուցանիշը ցույց է տալիս, թե ինչքան ահավոր է ներկայումս բևեռվածություն չափը Հայաստանում:

## Միջազգային համեմատություններ

Աշխարհում եկամուտների բաշխման անհավասարությամբ աչքի են ընկնում հիմնականում Լատինական Ամերիկայի երկրները: Հայաստանն այդ առումով շատ է մոտեցել այդ երկրների ցուցանիշներին և համարվում է ամենավատ եկամուտների բաշխում ունեցող երկրներից մեկը: Եկամուտների ամենաքիչ բևեռվածությամբ երկրներն են համարվում զարգացած եվրոպական երկրները, ինչպես նաև Եվրոմիությանը 2004 թվականին միացող նախկին սոցիալիստական երկրները: Հետաքրքիր է, որ այդ երկրներում շուկայական տնտեսության անցումից հետո նույնիսկ եկամուտների բաշխումը մնած աշխարհում ամենահավասարներից մեկը: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա նրա տարբերությունը եվրոպական երկրներից կայանում է նրանում, որ ԱՄՆ-ում եկամուտները բևեռացած են, բայց դա հիմնականում ոչ այն պատճառով, որ կան ծայրահեղ աղքատներ, այլ այն պատճառով, որ կան ծայրահեղ հարուստներ: Եվրոպայում շատ ավելի քիչ են այդպիսի հարուստների թիվը և մարդկանց մեծ մասը համեմատաբար նույն եկամուտները ունեն:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ինչքան շատ են պետության կողմից հավաքվող հարկերը և դրա միջոցով կատարվող ծախսերը, այնքան եկամուտները հավասար են բաշխվում և հակառակը: Օրինակ ԱՄՆ-ում հարկերի դրույքները շատ ավելի ցածր են քան Եվրոպայում, և նաև այդ պատճառով է, որ ԱՄՆ-ում եկամուտները ավելի անհավասար են բաշխվում քան Եվրոպայում:




## Ինչո՞ւ է Հայաստանում եկամուտների բևեռվածությունը այդքան խորը

Հայաստանում եկամուտների բաշխման ծայրահեղ անհավասարությունը (ամբողջ աշխարհում ամենավատերից մեկը) բացատրվում է հիմնական երկու գործոնով՝ գործազրկությամբ և պետության կողմից վերաբաշխողական միջոցառումների

*Շար. հաջորդ էջում*

*Սկիզբը՝ նախորդ էջում*

## 2003 թվականի բյուջեն

2003 թվականի բյուջեի կատարման առանձնահատկությունն այն է, որ կառավարությունը նախատեսվածից քիչ ծախսեր է կատարել, միևնույն ժամանակ հավաքագրելով նախատեսվածից ավել հարկային եկամուտներ, որի արդյունքում 20 մլրդ. դրամից ավել գումար կուտակել է ՀՀ կենտրոնական բանկում: 2004 թվականի բյուջեի ընդունման ընթացքում այդ խնայողությունների օգտագործման հարցը չի քննարկվել, որի արդյունքում 2004 թվականի բյուջեում դրանց օգտագործում չի նախատեսվել: Այնպես որ, դեռևս պետք է որոշվի թե արդյոք դրանք պետք է օգտագործվեն 2004 թվականի ընթացքում, թե պետք է որպես խնայողություն պահվեն հատուկ հաշիվներում մինչև ծախսման ուղղությունների վերաբերյալ վերջնական որոշումների ընդունումը:

## 2004 թվականի Բյուջեի օրենքի ընդունումը

2003 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ ազգային ժողովը ընդունեց պետական բյուջեի մասին օրենքը, որի հիմնական առանձնահատկությունը այն է, որ ի տարբերություն անցյալ տարվա բյուջեի, այս բյուջեում արդեն չկա Լինսի հիմնադրամի գումարները, քանի որ այդ բարեգործական ծրագիրը արդեն ավարտվել է: Իսկ դրական կողմը այն է, որ այս բյուջեով նախատեսվում է ուսուցիչների աշխատավարձի բարձրացում մինչև մոտ 50 ԱՄՆ դոլարի մակարդակի: Բայց պետք է նշել, որ կառավարությունը դա անելու է ոչ միայն կրթության ծախսերի ավելացման միջոցով, այլ նաև ուսուցիչների թվաքանակի կրճատմամբ և մնացած ուցուցիչների աշխատավարձերի բարձրացմանը ազատված գումարների ուղղմամբ: Մոտավոր գնահատականով 1 դրույք աշխատավարձի 15 000 դրամով բարձրացման մոտ 12 000 դրամը ի հաշիվ ծախսերի ավելացման է, իսկ 3 000 դրամը՝ ի հաշիվ 2003 թվականին ուսուցիչների կրճատման:


# ՁԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ**
«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ

**Խմբագիր**
Աղասի Մկրտչյան

**Փորձագետ**
Նելլի Համազարյան

**Թողարկման ղեկավար**
Մուշեղ Թումասյան

**Գեղարվեստական խմբագիր**
Քրիստափոր Փախանեան

**Լուսանկարները**
Photolure
Նազիկ Արմենակյան

**Տպաքանակը**
800 օրինակ:
Տարածվում է անվճար:

**Հասցե**
Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան,
Սամիկոնյանց 48
Հեռ./ֆաքս: (374 1) 234 420,
(374 1) 236 589
**www.edrc.am**
**dzayn@edrc.am**


*Սկիզբը՝ նախորդ էջում*

ծայրահեղ ցածր մակարդակով: Այսպես, ըստ գնահատականների Հայաստանում յուրաքանչյուր աշխատունակ 10 հոգուց 3-ը գործազուրկ է, որը, բացի այն, որ եկամտազուրկ է դարձնում այդ մարդկանց, նաև ցածրացնում է աշխատանք ունեցողների աշխատավարձերը, քանի որ գործազուրկների մեծ քանակի առկայության պայմաններում մասնավոր գործատուները իրենց կողմից վարձված մարդկանց շատ ավելի քիչ աշխատավարձ են առաջարկում քան հակառակ դեպքում կառաջարկեին եթե գործազուրկների թիվը ավելի պակաս լիներ: Արդյունքում, հարուստ գործատուները իրենց տնտեսական գործունեությունից ստացվող միջոցների շատ ավելի փոքր մասն են վճարում որպես աշխատավարձ, քան զարգացած երկրներում:



## Ինչպե՞ս է պետությունը իրականացնում եկամուտների վերաբաշխումը և ի՞նչ պորբլեմներ կան Հայաստանում

Պետությունը իրականացնելով սոցիալական ապահովության, կրթության և առողջապահության ծրագրեր, իրականացնում է վերաբաշխում, քանի որ այդ միջոցների մեծ մասը հավաքագրվում է հարկերի տեսքով և ծախսում է այնպես, որպեսզի դրանից ամենաշատն օգտվեն պակաս ապահոված խավերը: Հայաստանում պետությունն այդ վերաբաշխողական ֆունկցիան վատ է իրականացնում: Նախ, պետությունը, չնայած հարկային ոչ ցածր դրույքաչափերին, շատ քիչ հարկեր է հավաքում, և արդյունքում քիչ գումարներ է ծախսում սոցիալական ապահովության վրա, ավանդաբար վճարելով ընդամենը սիմվոլիկ թոշակներ, նպաստներ և այլն: Պետությունը նաև քիչ աշխատավարձեր է վճարում հազարավոր պետական ծառայողներին և տասնյակ հազարավոր ուսուցիչներին, և դրանով պատճառ է դառնում, որ մասնավոր գործատուները ևս ցածր աշխատավարձեր վճարեն իրենց աշխատողներին, մատնացույց անելով պետության վճարած «մի քանի հազար դրամը»:
Բացի այդ, հարկերը հավաքագրվում են ոչ արդյունավետ ձևով: Օրինակ, Հայաստանում հարկերի մեծ մասը գալիս է անուղղակի կամ այլ ձևով սպառողական հարկերից, որը ներառված է ապրանքների գների մեջ, սպառողների համար անտեսանելի է, բայց սպառողներն են վճարում ամեն անգամ ինչ-որ գնում անելիս: Այդ վճարողների մեծ քիչ թիվ չեն կազմում նաև անապահովները: Ցավոք ստացվում է, որ անապահովներն իրենց եկամտի ավելի մեծ տոկոսն են հարկեր մուծում քան հարուստները, քանի որ անապահովները իրենց եկամտի ավելի մեծ մասն են ծախսում, քան հարուստները (հարուստները խնայում են և այդ խնայած մասով փաստորեն սպառողական հարկեր չեն մուծում): Որպեսզի հարկերն ունենան իրական վերաբաշխողական ֆունկցիա, պետք է ոչ միայն դրանք հնարավորին չափ շատ հավաքել, այլ նաև ճիշտ ձևով հավաքել: Պետք է մեծացնել ուղղակի հարկերի, այսինքն եկամտահարկի և շահութահարկի գումարները, որոնք վճարվում են բնակչության առավել ապահով խմբերի կողմից:

## Բաշխման բարելավման ի՞նչ հնարավորություններ կան

Այս հարցում ինչ-որ կախված է պետությունից, պետք է լուծվի 1 ղեղատոմսով. ստվերային տնտեսության դեմ պայքարելով պետք է մեծացնել բյուջեի հարկային եկամուտները, ընդ որում առանց խտրականությունների, և դրանք ուղղել սոցիալական ոլորտ, այսինքն թոշակներին, կրթության ոլորտի աշխատողներին, ինչպես նաև պետական ծառայողների աշխատավարձերի աճին, որպեսզի մասնավոր ոլորտի աշխատավարձերն ևս աճեն:
Կան իհարկե հարցեր, որոնք կառավարությունից կախված չեն, ինչպես օրինակ կապիտալի կենտրոնացումը: Բայց որպեսզի բաշխումը առաջիկայում էլ ավելի չվատանա, պետությունը պետք է հնարավորություններ ստեղծի, որ ավելի շատ թվով մարդիկ դառնան գործարար, այլ ոչ թե բոլոր բիզնեսները պատկանեն մի քանի մարդու: Դրա համար ծայրահեղ կարևոր է բոլոր գործարարների նկատմամբ արդարացի պետական քաղաքականությունը:

## Ի՞նչ է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ)

ԱՀՌԾ-ն Հայաստանի կառավարության և միջազգային կազմակերպությունների կողմից նախաձեռնված ծրագիր է, որի նպատակն է կենտրոնացնել հնարավոր բոլոր միջոցները աղքատության հաղթահարման համար: Այս ծրագիրը ստեղծվել է այն գիտակցությամբ, որը Հայաստանն այլևս իրավունք չունի «փակել աչքերը» աղքատության խնդիրների վրա: Ծրագիրը, որի մշակումն ավարտվել է 2003 թվականի վերջերին, նախատեսում է, որ 2015 թվականին աղքատությունը Հայաստանում կկազմի մոտ 20 տոկոս, ներկայիս 50 տոկոսի փոխարեն: 2004-2015 թվականներին նախատեսվում է, որ կստեղծվի 248 հազար աշխատատեղ, որը զգալիորեն կթեթևացնի գործազրկության խնդիրները (ներկայումս ըստ գնահատականների իրական գործազուրկների թիվը հասնում է 300-350 հազարի):
Ըստ ԱՀՌԾ-ի, 2015 թվականին կենսաթոշակները կլինեն մոտ 27 հազար դրամ, ընտանեկան նպաստները ՝ 20 հազար դրամ, միջին աշխատավարձերը՝ ավելի քան 70 հազար դրամ: Ամենաշատը նախատեսվում է մեծացնել ուսուցիչների աշխատավարձերը, 2015 թվականին այն հասցնելով 230-240 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի: Այս միջոցառումների ֆինանսավորման համար հարկային եկամուտները աստիճանաբար կաճեն և 2015 թվականին կառավարությունը ՀՆԱ-ի 22.6 տոկոսը կհավաքի որպես հարկեր, ներկայիս ընդամենը 17.5 տոկոսի փոխարեն:
Պատկերացնելու համար, թե դա ինչ լրացուցիչ ռեսուրսներ կստեղծի, նշենք, որ եթե 2003 թվականին կառավարությունը հավաքեր ՀՆԱ-ի 22.7 տոկոսը, ապա հարկային եկամուտները կլինեին մոտ 80 մլրդ. դրամով ավել, որի միջոցով, օրինակ, հնարավոր կլիներ կենսաթոշակները բարձրացնել մոտ 3 անգամ:
Չնայած դրան, շատ փորձագետներ գտնում են, որ հարկային եկամուտները ԱՀՌԾ-ում բավականին համեստ են գնահատված և մինչև 2015 թվականը հարկային եկամուտները պետք է կազմեն ՀՆԱ-ի առնվազն 25 տոկոսը, որը հնարավորություն կտա ավելի մեծացնել սոցիալական ծախսերը:

## Ինչքանով են ԱՀՌԾ-ի ցուցանիշները վստահելի

ԱՀՌԾ-ում նախատեսված է բարձրացնել թոշակները ոչ միայն դրանց ուղղվող միջոցների ավելացման հաշվին, այլ նաև մինչև 2015 թվականը 120 հազարով կամ 30 տոկոսով թոշակառուների թվի նվազման հաշվին: Շատ մասնագետներ գտնում են, որ թեև 1940-ականներին Հայաստանի տարածքում ծնվածների թիվը կտրուկ նվազել է, և 2007-2011 թվականներին թոշակի անցնողների թիվը կտրուկ նվազելու է, այնուամենայնիվ, մինչև 2015 թվականին թոշակառուների թվի նախատեսված կրճատումը իրատեսական չէ, և կառավարությունը չի կարողանա թոշակները նախատեսված չափով բարձրացնել: Բացի այդ, ԱՀՌԾ ծրագիրը միայն կրթության բնագավառի վերաբերյալ է բավարար արմատական բարելավումներ նախատեսում, իսկ ինչ վերաբերում է սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտներին, ապա դրանց վրա նախատեսված չափով միջոցների ծախսումը բավարար չի կարող լինել: Կառավարությունը պետք է կարողանա առնվազն ՀՆԱ-ի մեջ 2.5-3 տոկոսային կետով ավել հարկեր հավաքի, դրանք ուղղելով սոցիալական ապահովությանը և անապահով խավերի առողջության պահպանմանը:

## ԱՀՌԾ-ի վերահսկողությունը հասարակության կողմից

ԱՀՌԾ ծրագիրը նախատեսում է իրավիճակի տարեցտարի բարելավում: Հասարակությունը պետք է ակտիվ մասնակցություն ցուցաբերի ծրագրի վերահսկողությունը, ստուգելով թե արդյո՞ք երկիրը շարժվում է ԱՀՌԾ-ում նախատեսված ճանապարհով և արդյո՞ք տարեկան կտրվածքով առաջխաղացումներ արձանագրվել են: Հասարակությունը ներկայացնող կազմակերպությունների կողմից պետք է միշտ ճնշում լինի ներկայիս և հաջորդ կառավարությունների վրա, որպեսզի կյանքի կոչվեն ԱՀՌԾ-ով նախատեսված նպատակները, և նույնիսկ ավելին, առաջին իսկ հնարավորության դեպքում վերանայել ԱՀՌԾ քանակային նպատակները, սահմանելով ավելի աղքատամետ նպատակներ: